

բերութիւնները ուրիշ ամէն գաւառէ առաջ՝ դրած էր տանելի պայմաններու: Հնասէր, հմուտ, մատենագիտական հին հետաքրքրութիւններով, որոնք մեր կրօնականներուն մէկ մասին յատուկ են եօթանասունական թուականներուն, երբ Ալիշանի ուղիով մեր ազգայնականութիւնը թափանցում կը փորձէ դէպի զանգուածը: Եպիսկոպոսը, մարդերու մեծ կշռող մը, ինք կ'ըսէր սարաֆ, չխանդավառուեցաւ սա կէս տոքթորով, որ հակառակ ճեմարանական ըլլալուն, կ'ուրանար գրաբարը, «Հրաւիրակ»ներուն գեղեցկութիւնը ու կը պաշտպանէր արդիական սկզբունքները, լեզուէ՝ ինչպէս վարչութենէ: Անիկա, բարի մարդ, պարտք սեպեց իրեն զգացնել ժամանակներուն փափկութիւնը, ծայրայեղ գաղափարներուն կարելի վնասը մեր ժողովուրդին բարօրութեանը համար, որ դիտուած, ինչպէս ինքը՝ տոքթորը կը տեսնէր, իր պայմաններուն մէջ, հեռու էր նմանելէ ուրիշներու երեւակայածին. թուրք մը կար մեր գլխուն, զոր պարտաւոր էինք կրելու, ինչպէս ուրիշներ ալ կը կրեն ուրիշ բան: Այդ թուրքը մեր պապերը վարեր էին առանց արդի գաղափարներուն: Ու պահած՝ գոնէ թիւր: Նորերուն պարտքն էր չդպիլ այդ թիւին, որուն էր միշտ վերջին խօսքը ազգերու գուպարին մէջ: «Խանձի հո՞տ» առած էր բանիմաց եկեղեցականը՝ այս կերպ արտայայտուելու համար: Անիկա կարճ եղաւ այս պահպանողական տեսութիւններուն վրայ: Յետոյ խօսեցաւ մեր աշուղներէն: Սրբազանին մենասիրութիւնն էր ատիկա: Բանասիրական ու պատմական հանգանակներով ուսումնասիրած էր մեր աշուղները: Բոլորին կեանքէն ու գործէն տալով մաս մը բան հանդէսներու: Հիացող մը ինքը, այդ արուեստագէտներուն, որոնց մեծ մասին կեանքը տրամաթիք հանգոյցով մը կը կապուէր նախնական այդ ստեղծագործութեան: Արժէ՞ք: Կ'ընդունէր այդ բանը, հրապարակ չդրած չափով մը, այսինքն՝ ամբողջ թրքական ժողովրդական երգերը եւ անոնց եղանակները անոնցմէ բխած յայտարարելով, ինչպէս կ'ընեն հիմա թուրքերը՝ վարկածը չըջելով. այ-